



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԻԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԵՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՌԵԴԱԿՏՈՐԻ ՏԱՐԻ

ԶՄԻՌՆԻԱ ՇԱԲԱԹ 18 ՄԱՐՏ 1878

ԹԻԻ 4088

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հայտնութեան նախաշաւի պայմանաց դաշնագիրն, որ արդէն ստորագրեալ էր 'ի վեհափառ Սուլթանէն, վաւերացաւ նաեւ յօգուստաւ...

«Հայաստան բարենորոգումներ պիտի ընդունի ըստ տեղական պիտոյից, և քիւրտերուն և քրդերէններուն դէմ պիտի պաշտպանուի»:

Կըհաւատեն թէ Ռուսաց կառավարութիւնն արդէն պաշտօնապէս հաղորդեալէ Եւրոպիոյ մեծ տէրութեանց զդաշնագիրն հայտնութեան...

Եթէ նկատողութեան առնուիք մէկ կողմանէ Անգլիոյ հասարակաց կարծեաց նախանձոտ զրգուովիւնն...

նեղ ինչպէս բազումք այժմէն կեդրակայուցանեն, թէ տէրութեանց ժողովոյն հաշտարար ջանքն...

Այս կարծիքն ունեցողք՝ յառաջ կըբերեն թէ Ռուսիան երբէք պիտի չզիջանի դեպքանաւ ժողովոյն քննութեան ներքեւ դնել զբոլոր նախաշաւի պայմանն...

Բայց յայտնանէ նկատողութեան առնելոյ արժանի է թէ խոհական աղբեցութիւնն Գերմանիոյ կառավարութեան կամ լաւ ևս է տուել Պիլզնաք իշխանին...

Աւստրոհունգարիոյ արտաքին գործոց նախարար Անտրասի կոմսն, 'ի պէտտ զինուորական պատրաստութեանց 60 միլիոն ֆրիւրինաց վարկ մի (credit) խնդրելոյ բարեպատեհ առթիւ...

մեան քաղաքային կայութեան և նախաշաւի պայմանաց հաշտութեան:

Ի նոյն ատենախօսութենէն հարկ կըհամարուիք զհետեւեալ տողն յառաջ բերել, որք քաշալերական են վասն խաղաղասէր արդեանց գեղականութեան:

«Եւրոպիոյ օգուտքն ինչպէս նաեւ իւրաքանչիւր տէրութեան մասնաւոր օգուտքն չեն կրնար անարատ ելանել 'ի բանախօսութեանց, ուր այս օգուտքն և այս տէրութիւնքն ո՛ր և է կերպիւ ներկայացնող չեն դառնուիր, և ուր յաղթեալքն և յաղթողքն միայն ներկայ են: Յաղթողն հարկաւ օգուտ մի չկրնար ունենալ չափաւորելով զպահանջմունս իւր: Իսկ յաղթեալն կարողութիւն չունի չափաւորելոյ զայնուսիկ: Եւ այս բանը տեղի կունենայ ևս առաւել իրաւամբ երբ պայմանքն կատարեալապէս որոշեալ չեն, բայց միայն իբրեւ հիմն պիտի բռնուին յետագայ վճռական համաձայնութեան միոյ: Եթէ ասոր վրայ յաւելցնենք զչափազանցութիւնն և զհակասութիւնն հեռագրական լրաց, հասելոյ 'ի տարբեր աղբերաց, զարմանալի չէ որ այսպիսի պարագայից մէջ ընդհանուր տպաւորութիւնն երկկողմի լինի: Դեռ շատ ժամանակ չէ որ ինքեկայացնէին զՌուսիան իբրեւ ակար 'ի մասին զինուորական զօրութեան և իբրեւ տէրութիւն մի՛ որ կարող չէ յաջողութեամբաւ ընդգէմ Թուրքիոյ և հաստատուն մնալ 'ի կարգս մեծ տէրութեանց: Իսկ այսօր կըներկայացնեն զՌուսիան և զզինուորական զօրութիւն իւր՝ իբրեւ սպառնացող բռնադատի Եւրոպիոյ և յարձակողական դիտաւորութիւններ տաժող ընդգէմ նորա: Ստոյգն այն է որ 'ի ժամանակի հեռագրութեան կապիւմք և զատողութիւնքն հիմնեալ են ջղային սաստիկ գրգռութեամբ 'ի վերայ համառօտ հեռագրական համբաւոց և այս կերպիւ է որ սովորաբար հասարակաց կարծիքն մէկ հեռաւոր վերջին ծայրէն 'ի միւս վերջին ծայրն կերթայ: Բայտ իմ գատողութեան քաղաքային ընդհանուր կացութիւնն այնքան սպառնալի կեր-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀՈՎՈՒԱԿԱՆ ԲԱՐԻՔ

Հրաշխիք ես, բարի՛ Սէր, աշխարհիս բաների մէջ, Հայ սրտերն արա՛ք եղ բոյն, ուր միշտ անես եւ և էջ: Ընտանի բարեկամ լը՛ր, որ քո շնորհիւ մեր ազգն կարողանայ շուտ գտնել իւր կորուսած հին փառքն: Դարձու՛ր դէպ մեզ աննախանձ քո գթառատ աչերն: Ամեն ուրեք որոնէ, ճարճ անբաղդ Հայերն: Երբ սրանաս դու արագ Հայոց Զոր ու Հովիտներ, Այցելէ՛ վառ ոգւովդ նոցա հսկող հովիւներն: Տու՛ր քո առատ շնորհէն. զայն մի՛ խնայեր նորանցմէ: Քանզի նորանց առաւել քան զամէնն հարկաւոր է: Որ արթնութեամբ միշտ հովուեն իւրեանց գառն ու ոչխարներ, Եւ չ'ուղղեն նորանց քայլերն ապառաժ քարոտ տեղեր: Ինչպէս տուիր անխնայ Մաղաքեայ վարդապետին, Որ անձնուէր քաջ հովիւ դարձաւ իւր ցրուեալ հօտին: Արագ հսկայ քայլերով հասաւ փութով Բաբելոն, Տեսաւ որ փոքր անդ մի հօտ անառաջնորդ անգործօն: Հեռացեր են անխորհուրդ կանաչագեղ դաշտերէն, Խաղան և անբոյս տեղում՝ յողնած ցրուեալ դանդաչէն: Հնչեց իւր քաղցր սրինգըն 'ի լուր անմեղ ոչխարաց, Որոց ծանօթ էին միշտ ձայնք ազգային մեր հովուաց: Հաւաքուեցան միաբան, նորա շուրջն պատեցին, Սրնգի անոյշ ձայնէն իւրեանց կեանքն նոր դարին: Հնչեց նա նոր եղանակ և միաքերն գրաւեց: Աղբաւրական ոգւով ամենի սիրտն վառեց:

Առաջնորդեց վոյթ նորանց յուշիկ յուշիկ քայլերով, Դուրս բերեց ապառաժէն բերրի երկիր հով ու զով: Հասոյց, այո, անդ հօտը զարդարուն մարդագետնի, Ուր քաղցր հօտեր կ'ըլուրեն բազմատեսակ վարդերի: Զանազան բոյսով լի է, գոյն գոյն ծաղկունք բացուեր են, Խայտաճամուկ թռչուններ նոցա մէջը միշտ կ'երգեն: Քաղցրահամ աղբիւրներն խորովան անդ սահելով, Կանաչ տերեւոյ վերայ մարգարտի պէս ցօղելով: Քաղցրահնչիւն Զեփիւռն մեղմ անուշիկ կ'հնչէ, Թմրած անհոգ սրտերըն խոր քնէ կ'արթնցնէ, Թո՛ղ վայելեն այսուհետ կեանք երջանիկ գերազանց: Բարօրութեանն որոց ուրախ է Մ. Բժշկեանց:

Ի Թէհրան, 2 Յունւար 1878

ԲԱՐԻԼՈՆ

Աշնան վերջերում էի ես 'ի վերայ Եփրատի, Յաջող հողմն կ'հնչէր դէպ Բաբելոն նաւէի: Երբ արեւըն խոնարհեց, թէեւ ինքէն չ'երեւեր, Սակայն կարծես երկինքն կարմիր դուռնով պատել էր: Ճիշտ միջացեալ ժամին էր որ խարիսխ արձակեցին, Որոտաց նաւի շողին հա՛ Բաբելոն ձայնեցին: Յուսայի լուսանալուն յաջողէ ինձ Տէր բարին, Գնամ շուտով գտանեմ մեր ազգակից հայերին: Առաւօտուն շատ վաղէր որ դուրս ելայ քաղաքը, Միաքրս այն էր որ գնամ դէպի Հայերի թաղը: Մի արաբ ինձ վարձելով՝ զիս եկեղեցին տարաւ, Բակում մինակ մնացի մոռածութիւնն ինձ կալաւ: Արմաւենոյ ծառերը շարուած էին կանոնով,

պիւս պիտի չեն, կայանայի ժողովն տէրութեանց: Գանդի Ռուսիան բազմիցս յայտնեց թէ պատերազմ հրատարակելով՝ ամենեւին եսական նպատակ մի չունի: այլ իւր նպատակն է Արեւելքի քրիստոնէից վիճակին բարեփոխում: Արդ այս նպատակին և զինուորական յաջողութեան վերայօք խնդիր մի չկրնար լինել: Մեր խնդրածն ուրիշ բան չէ բայց միայն թէ այս արդիւնքն այնպիսի կերպիւս սահմանափակուի, որ ոչ մեր օգտից և ոչ Եւրոպիոյ օգտից ֆուտսարեր լինի: Եւրոպիոյ իրաւունքն և իւր գլխաւոր օգուտն կը պահանջեն որ պատերազմին հետեւութիւնն հաստատուն խաղաղութիւն մի լինի և ոչ թէ այնպիսի կացութիւն մի՝ որ իւր մէջը պարունակէ զուերմն նոր շփոթութեանց: որ յիշեալ հետեւութիւնն լինի՝ կարելի եղածին չափ՝ գոհացուցիչ լուծումն Արեւելեան խնդրոյն և ոչ թէ Եւրոպիոյ հաւասարակշռութեան բեկումն: Պատերազմին արդիւնքն համաձայնել այս տեսակէտին հետ: ահա այս պիտի լինի և որպէսզի Գեոպոլիտիկոսները զորքը, և յորում կրկնայանայ թէ Ռուսիոյ և թէ Եւրոպիոյ օգուտն:

Այս ամեն պատճառաւ համար՝ արժան է յուսալ թէ Եւրոպական համաձայնութիւն մի կրնայ ծագիլ ի խորհրդակցութեանց, զորս մեծ տէրութիւնքն կը պատրաստուին բնել:

Եւ այսպիսի յուսով է, որ Աւստրոհունգարիոյ կառավարութիւնն պիտի երթայ մասնակցել զեւրոպական խորհրդակցութեանց, և իրեն պարտք կը համարի աշխատիլ հաստատուն պահել զխաղաղութիւնն և միանգամայն անվեհեր ի գործ գնել ամեն միջոց ի պաշտպանութիւն մասնաւոր օգտից Աւստրոհունգարիոյ, ինչպէս նաև ընդհանր օգտից Եւրոպիոյ:

Աւստրիական կոմսն շարունակելով պաշտպանել զքաղաքականութիւն իւր առաջի պատգամաւորութեան Աւստրիոյ և Հունգարիոյ ազդեցիկ երեսփոխանաց, վերջացոյց զատենախօսութիւն իւր ասելով թէ՝ եթէ ինքն տարբեր քաղաքականութեան հետեւէր՝ անհրաժեշտ կերպիւս պատճառ պիտի լինէր պատերազմի բնդդէմ մեծազոր ազգի և իւր վերայ պիտի հրաւիրէր զանոգեքիւս ատերութիւն Արեւելեան քրիստոնէից: Նշանակութեան արժանի կը համարէր զհետեւեալ հեռագիրն՝ ուղղեալ ի Պէրլինէն, զոր կը հրատարակէ Լոնտոնի Թայմս օրագիրն: «Գերմանիան կը խորհի թէ զրեթէ ամեն յոգաւածքն նախաշաւիղ պայմանաց ստորագրելոց ի գիւղն Ալի—Սթեֆանո պարտին գրուիլ ի վերաքննութիւն Գեոպոլիտիկոսները, և Ռուսիան ըստ բաւականին հակամիտութիւն կըցուցը ընդունելոյ զայս խորհուրդն:

«Հաւատարմ կերեի թէ Անգլիան և Գ. Եւրոպիան պիտի յաջողին համաձայնեալ իրարու հետ ի վերայ եղիպական խնդրոյն նախքան զգոհմանութեամբ Գեոպոլիտիկոսները: որում այս երկու տէրութիւնքն պիտի ներկայացնեն զբարեկարգութիւնն և զերաշխաւորութիւնն, զորս հարկաւոր պիտի դառնն վասն ապահովութեան Սուէզի ջրանցից և բարեօք կառավարութեան ինքիպատիւն»:

Փարիզի «Տէպա» լրագրոյն մէջ զհետեւեալ կարեւոր տեղեկութիւնքն ընթերցանուիք: «Ռուսիոյ եկեղեցական սուրբ Սինոդին լիակատար փոխանորդ (պրոկուրոր) Թոլսթոյէ կոմսին վեհա. կայսեր մատուցած մէկ տեղեկագրոյն համեմատ 1875 տարւոյն մէջ եղած վիճակագրութեամբ ոտուգուած է որ՝ Ռուսաստանի մէջ կրօնական ընդ ամենն 38,602 մայր եկեղեցի (քաթէճորալ) և երկրորդական կարգի եկեղեցի, 12860 մատուռ և փոքրիկ աղօթատուն, 98,587 աւագ երէցք, քահանայք, սուրկաւորք և տիրացուք: Բաց յայտնէ, շուրջ 56,500,000 հաւատացեալք կան, յորոց 27,500,000ն աբու են և 29,000,000ն էք: Ընթաց 1875 ամին սուրբ Սինոդն 1005 ամենաւորութեանց լուծումն (divorce) ընդունեցաւ: որոց 669ը եղած են ի պատճառս բացակայութեան և երկարանշուր ամուսնեւոր տեղւոյն և բնակութեան անձանթ ըլլալուն: Յիշեալ 1875 տարւոյն մէջ՝ եկեղեցւոյն հասոյթը հասած է ի գումար 11,278,111 ռուբլիաց:

ԱՂԳԱՅԻՆ

Փարիզի «Տէպա» օրագրոյն Մարտի 5 (Ն. Տ.) թուոյն մէջ զյետագոյ ծանրակշիռ յոգաւածն ընթերցանուիք. զոր մեր կենցաղագէտ ազգայնոց ու շաղկապութեանն արժանի կը համարիմք: «Կարեւոր տեղեկութիւնքն կը հաղորդեն մեզ ի վերայ բազմիցս կամ վիճակին Հայոց բնակելոց ի Թուրքիա. տեղեկութիւնք՝ զորս յօժարամիտ փութով ընդունիմք և հրատարակեմք: «Ի Պոլսոյ գրեալ նամակի մը համեմատ, որ հրատարակեցաւ «Թուրքիա» տէ Տէպա» օրագրոյն մէջ, Սուլթանն խրատ տուած լինի Հայոց Պատրիարքին՝ ինքնօրինութիւն խնդել վասն Հայաստանի, և Պատրիարքն պատասխան տուած լինի թէ ինքն չգիտէր իսկ թէ Հայք ողջ այնու թիւն ունենին: «Արդ՝ հարկ է ուղղել զայս եղեւութիւնն, քանզի Հայոց Պատրիարքն իւր ինքնայօժար

կամքն խնդրեաց զինքնօրինութեան վասն Հայաստանի: Իսկ օրինակն կառավարութիւնն տակաւին պատասխան չտուաւ: սակայն ի ներկայութեան ամեն կարգադրութեանց՝ որք յառաջ կը բերուին վասն գաւառաց երուական թուրքիոյ, յոյժ հաւանական է որ Բարձրագոյն Գուռն կատարեալպէս արդար և օրինաւոր պիտի պտնէ զինքիւն Հայոց: Միւս կողմանէ, Պատրիարքն չէր կրնար արտասանել զխօսքն զոր կը զնեն ի բերան նորա. վասնզի յոյժ աւելի ակնածու է նա քան զայլ ամեն ոք՝ առաջի ազգայնութեան զգացման զոր Հայք կարող են անարատ պահել ի մէջ թուրք ձախորդ փոփոխութեանց բազմիցս: Նոքա՝ ընդդէմ հալածանաց որոց ենթակայ եղին յամենայն կողմանց, սիրահար և հաստատուն մնացին միշտ այս զգացման մէջ ամենայն ուրեք որ զնացին: Իսկ այժմ պաշտաւորեալ են ուրիշ մի տեսակ հալածանաց դէմ մտքաւիլ, որ աւելի անապօրոյն է քան զայլս ամենայն: այն է Եւրոպիոյ անապօրութիւնն կամ առ երեսցուցեալ անդիտութիւնն կայութեան նոցա:

«Հայոց միւսնոց Պատրիարքն պատուէր ընկալեալ էր հրաւիրել ի վերայ կայութեան հայրենակցոց իւրոյ զուշադրութիւն գիւտնադիտաց՝ որք յանցելով ամի եկեալ էին ի Կ. Պոլս վասն խորհրդակցելոյ ի վերայ լուսաւոյն եղաւ նախկին բարեօքելոյ զվիճակ քրիստոնէից: Ի յիշեալ դիւտնադիտաց ամենք բաւական համարեցան պատասխանել թէ հայկական խնդիր չկար: Գեռ ի վերջին առաջ, Անգլիոյ արտաքին գործոց պաշտօնեայն՝ պատասխանելով Թէրէֆլի գրքին մի ճարտասան ատենաբանութեանն ի նպատակ Հայոց, կրէր թէ պէտք չէ յարուցանել հայկական խնդիր մի:

«Մարդոցս միտքն կը շփոթի ենթագիտութեամբ ի մասին այս քաղաքականութեան՝ որ կարտաքսէ զՀայ ժողովուրդն ի մասնակցութեան ամենայն կարգադրութեանց յառաջ բերելոց, և որոց նպատակն է՝ թէ ի բերանն կայսեր Ռուսիոյ և թէ ի բերանն Անգլիոյ նախարարաց՝ Արեւելքի քրիստոնէից վիճակին բարեփոխում: Այս մարդասիրական զգացումն արդեօք անկեղծ է, եթէ ստուգիւ անկեղծ է, ոչ ինչ չկրնար արդարացալանել զանապարհութիւնն՝ որ ցոյց կը տուի վասն Հայոց:

«Այնպէս ամենեւին հին ժողովրդոց մէկն ու Հայոց ազգն է: Ընթաց հաղարարութեան հաստատուն ունէր և կրկնաւոր զանկալութիւն իւր: Հայք՝ քրիստոնէայն են յիշդրեաւորութեան թուականին ֆրիչին, և կը կազմեն զմի ի կառնորդոյն տարեւոյց Թուրքիոյ: Նոցա թիւն

Մի բնդ արձակ չինուած քու՝ արեւելեան ճաշակով, Իբրեւ արձան Յունական կանգնած մնացեր էի, Օտարական նորահաս՝ ուժ հետ պիտի խօսէի: Մարդիկ կային դէպ ի ժամ նոր մտայով հագնուած, Ինձմէ մի բան հարց չարին ես մնացի շուարած: Եկեղեցուն մօտեցայ որ իմանամ ես մի բան, Աստուածածնայ Տօն գոլով՝ երգում էին Ծարական: Յոյսը եղև հաստատուն որ իսկ Հայոց էր սա ժամ, Մտածելի լաւ եղաւ մարդ կանց կ'ծանօթանամ: Եկան և երկու կանայք հարցանելին «սա ո՞վ է, Այս պանդ ուխտըն նոր եկած, արեւօք ո՞ր տեղի Հայ է»:

Տիկնայք այսպէս խօսելով՝ ցոյց տուին կարեկցութիւն, Նոցա զուտրթ սրտի մէջ պաղած չէր Հայկայ արեւն: Սպասեցի բաւական բակն մէջը շրջելով, Տեսայ դէպ ինձ էր գալիս մի քահանայ փիլոսոփ: Իսկոյն մօտեցայ նորան սուրբ Ան համբուրեցի: Անշտի ուրախ լինելով՝ ինչ խօսել չ'իմացի: — Դու աստ ինչո՞ւ եկեր ես, տէր Հայրն ինձմէ հարց արեց, Այս էր բոլոր նորա խօսք, ուրիշ մի բան չ'կրկնեց: — Պանդ ուխտ եմ աստ նոր եկած, ինձ պէտք է մի ի՞նչ ան: Այստեղ խան է եկած ես, ուստի՞ տամ քեզ օթի ան: — Տէր հայր, գիտեմ աստ խան է, պատուէր ունիմ Պատրայէ, Ժամկոչ Դաւթին տեսնելոյ թէ որ կամի բնդ ան: Բաղարիս շուկայումն ինձ մի տեսաւ: — Ինձ հետ շրջի երբեք կամ՝ ճանապարհ ցուցանէ: Արի, Մարկոս, դու գնա, Դաւիթ ժամկոչ գործ ունէ: — Ես իմանեալս սորան մի տեղ որոնէ: Ընդ քիմնեալ Մարկոսն՝ այլ պատասխան կ'տալ նա:

Տէր հայրն ասեց բարկայամ, շատ մի խօսիր, Եկ դնայ: Ուղղեց նա իւր ճանապարհն, այլ իմ քայլից չ'նայեց, Մեծուալով կ'ճեպէր, կարծես վերաւոր խոզ էր: Ծուռով հասաւ նա մի խան որ բնակելոյ տեղ չ'ունէր, Բարկանալով ինձ ասեց՝ այսքանքն էր իմ պատուէր: Ուր և շուտով յետ դարձաւ՝ իւրեան գործին եղծալով, Անգ. մնացի ես միւսակ անօղնական մնալով: Մարդքս միշտ նեղասիրտ է, այսքանքն չ'ըմտած է, Որ երբ հասնի նեղութեան՝ Տէրքն նորտ օղնում է: Սիրտ անելով գնացի, մի ուրիշ խան ճարեցի: Յուսահատած լինելով՝ չէնքին էլ չ'նայեցի: Մի կիսաւեր խան էր այն, աղիւսներն թափվեալ, Սե մրտած պատերով, ուր սարդն ոտայն էր ձգած: Բնակեցայ նորա մէջ և ինձ խիստ վատ կ'իմուէր, Զունենալով խօսակից՝ միայնութիւնն զիս նեղէր: Երբ հանդարտեց այլ սիրաւս՝ յանկարծ եկաւ իմ միտքն, Որ աստ ունիմ բարեկամ ինձ Թէ հրանցի հրեաներն: Ելի խանի առաջն, մի Հրեայ ճարեցի: Ծատ նեղութեամբ ես նորան իմ միտքս հասկացուցի: Նորան հետք գնացինք, շուտով մի տուն ինձ ճարեց: Ինչ սիրայիւր սրտով նա և ինչ պատուով ընդունեց: Ամենայն յօժարութեամբ ինձ օգնելոյ խօսք տուեց, Աստ և անդ պաշտելով՝ գործերս կարգի դրեց: Միւս առաւօտն եկաւ այլ բարեկամ հրէայ, Մեր կրկին տեսութեանն օրքան ուրախ եղի. նա: Ծատ խօսելով նորա հետ՝ տեղեկացայ ամեն բան: Խոստացաւ որ ինձ տանի ցոյց տայ իւրեանց վարժարան: Գրնացինք ի միասին, մտանք մի փառաւոր տուն:

... նուազն երկու միլիոնի կը հասնի Ստիպ մէջ. հետեւեալը աւելի բազմաթիւ են քան զՅոյնս՝ որք գտանին յերոսոստատի Թուրքիա ։ Ուսումն և կրթութիւնն աւելի տարածեալ են Հայոց մէջ քան թէ Արեւելքի ուրիշ ո՞ր և է ժողովրդեան մէջ ։ Ի բաց առեալ զՅոյնս ։ Հայք երբէք խռովիչ չեղեն բարեկարգութեան և հանգարտութեան Արեւելքի կամ Եւրոպայի ։ Լուազոյն կը համարին սպասել յայժմեան տէրանց իւրեանց և ի քրիստոնեայ և մարգարէի Եւրոպայի ըզբնութեան տառապանացն՝ որոյ կը տանին ի դաւաճ հետէ և զորս անգագար առաջի առնեն կառավարչաց իւրեանց ի տան ամաց հետէ ։ և Եւրոպայի՝ յերկուց ամաց հետէ ։ Բայց եթէ Հայք չեն որ պատճառ տուին Արեւելքի խնդրոյն բորբոքման և ահագին հետեւութեանց նորին ։ Կրնային սակայն պիտանի լինել իբրեւ տարր մի լուծմանց կամ՝ կարգադրութեանց որք անհետ պիտի ընէին՝ Ստիպ կոյմէն ։ Ժանր դժուարութիւններ և երկարաժամկետեան խըմբումներ ի մէջ Անգլիոյ և Ռուսիոյ ։ Այս բանին համար բաւական է որ Մեծին Ռիտանիոյ դիւանագէտ պաշտօնակալք բարեհաճին զբաղել ի վերայ Հայ ժողովրդեան և քննել զգործնական կողմն ինդոյն նոցա՝ հաշտարար և իրաւաստ լինելոյ քաղաքականութեան տէրակետով, զոր կը պահանջեն ծանրակշիւ գէպքն ։

Արժան համարեցաք ի յոյս ընծայել զհետեւեալ նամակն, զոր ի ճերտոգ ունի ամսոյս ընկալաք ի թէհրանէ ։

Թէհրան, 8 Փետրվար 1878
... և բարեկան խմբակիր Արշալոյս Արարատեան լրագրոյն ի Զմիւռնա

Մեզ և բոլոր Հայոց ազգին յայտնի է ձեր ազգասիրական և բարեկան ոգին, որ վաղուց ժամանակէ ի վեր քրտնալան վտտակօք միշտ ի յողորմէք ազգն գէպի ուսումն գիտութեան, և շատ տեղեր ձեր բարեկամտակ Արշալոյսն ձգբապէս կընուիրէք, իբրեւ բարի սերմեր մտաւոր արտերի համար ։ Ինչպէս որ Թէհրանու Հայկազնեան ուսումնարանն ևս երկու օրինակ շատ անուանաբար կըստնայ, նորան մասնակից լինելով և տարիներէ ի վեր մեր խոսկանայեալ մասց ծնունդն նորանով պարարուելով՝ օրէջօր յառաջագիմութեան նշաններ կերկար, բաւ առածին (թէ Նուրի շիթերն շարունակ կաթնով) կարողեն ադառաթ քարն մաշել՝ նոյնպէս ձեր ուսման բարի յորդորներն մեր սրտին ներգործելով կարողացաւ Հայկական եռանդուն արիւնն մեր երակներին մէջ շարժել մինչև այն աստիճան որ կարողացան զմեզ բանաստեղծական գրուածներն ձգ տեսցուցանել, վստահ եմ՝

որ միշտ կըցանկաք Հայ ազգի և նորա սերնդոյ յառաջագիմութեանն ։ ահա այս գրովս ձեզ մի նորութիւն կը յուղարկեմ ։ քանզի խիկրանէ անտի քանի որ խմբագրութեան պաշտօն կը վարէք գուցէ երբէք չէք ստացած Պարսից մայրաքաղաք Թէհրանէն մի գրուած ։ որով ի հարկէ որ պէտք է հիմա դարձանք այս անգամ երեք(1) հատ բանաստեղծութիւն մի անգամ ստանալով, այն ևս յուսմէ՞, մի Զարկարէ՞ որ է ոսկերիչ, Ես իմ արհեստիս մէջ կը հետեւիմ այսպէս գործերի որ կարողանամ տկար մարքերն քաջալերել և նոցա սրտերին մէջ բարի նախանձու զգացումներ յարուցանել, որպէսզի հետեւելով իմ ընթացքին, իւրեանց թաղուն ոգւոց եռանդալից աշխոյժն անգործունէութեամբ չ'կորցնեն ։

Կընդդրեմ, աղնիւ խմբագիր, որ Բարիկօնի համար երկու գրած երգերս միատեղ հրատարակէք, որպէսզի ընթերցողին մի քաղցրութիւն տայ ։ նոցա անցքը և տեղեկութիւնն գրելու աւելորդ է ։ որովհետեւ Ս. Առաջնորդին գրած նամակիս օրինակն(2) յուղարկեցի ձեզ, նորանով՝ և գրածս երգերէն կը տեղեկաք մեր անցքին որ ի Բարեկօն ։

Եթէ բարեհաճիք մեր գրուածներն ընդունելով ձեր լրագրութեան էջերոյն արժանայնել նորան, պիտի խրատուէք զատուագրեալն յառաջադաշտ լինելոյ իւր ազգայ ազգասիրական ընթացից մէջ, որ մնայ ձեզ միշտ անձնանուէր ՄԿՐՏԻՉ Յ. ԲԺՇԿԵԱՆՅ

Քաղաքիս Հայ Ընթերցատան գործադիր Ժողովն զյետագայ ազգարարութիւնն յուղարկեալ է մեզ ի հրատարակութիւն ։

Զմիւռնոյ Հայ Ընթերցատան նախկին գործադիր Ժողովը իր միամտայ շրջանք անթերի կերպով կատարելէ յետոյ, ընդհանուր Ժողով գումարուելով քուէի առաւելութեամբ նոր Գործադիր Ժողով(3) ընտրուելը արդոյ հասարակութեան ծանուցանելու առթիւ՝ նորընտիր Ժողովս կ'իմրէ յառաջ հրաւեր կարգալահամայն ուսումնասէր և ընթերցասէր ազգայնոց, որ

(1) Զորոց գերկուսն հրատարակեցաք ի Բանասիրականի ներկայ բուռս և գերբորոցն հրատարակեցուք յայլում նուազի ։

(2) Զաջորդ բուռով մերով ունիմք հրատարակել ։

(3) Նորընտիր գործադիր ժողովը պարտ կը համարի հրատարակա իր անկեղծ շնորհակալութիւնը մատուցանել նախկին գործադիր ժողովոյն եւ ի մասնաւորի նոյն ժողովոյն ատենադպիր մեծա. պալոսն Զ. Զիվիճեանի, որոն անխնշ աշխատութիւններու եւ գումարութիւններու արգիւնքը ակն յակնիման կ'երեւին Ընթերցատան բոլոր արձանագրութիւններուն մէջ ։

Ծառօ. Գ. Ժ.

բարեհաճին իրենց թէ նիւթական և թէ բարոյական ձեռնառում իւրենքը շարունակել, ինչպէս անցեալոյն՝ նոյնպէս և ներկայ շրջանին մէջ ի բարգաւաճումն վերոյիշեալ ազգօգուտ հիմնադրութեան ի պարժանս Հայ հասարակութեան ։

Ժողովս կը փութայ նաև ծանուցանել որ այժմեան Ընթերցատան թաղին անյարմարութիւնը նկատելով, ի մոտ ունի մօտ օրերս աւելի յարմար և բանուկ փողոց մի փոխադրել զայն, և այս նպատակի գործադրութեանը համար հարկաւ արդոյ ազգայնոց սովորական առատաձեռնութեան պէտք ունի ։

Գործադիր Ժողով
Հայ Ընթերցատան Զմիւռնոյ ։

Ահա տակն անուանք անգամաց գործողութիւն ։

- Ետեւոյ տեարք ։
- | | |
|------------------|----------------|
| Բ. Ա. Բարաղեան, | Ա. Ե. Երանյան, |
| Ա. Կ. Աղապարեան, | Ա. Ե. Երանյան, |
| Թ. Յ. Թումանյան, | Գ. Ե. Երանյան, |
| Մ. Ս. Սիմոնյան, | Թ. Ե. Երանյան, |
| Ա. Գ. Պէրկանյան, | |
| Մ. Ս. Իվլիքեան, | |
| Պ. Բ. Սլաւանյան, | |

Կիմանալք թէ նիւթական և թէ բարոյական գործադրութեան տէր Թոնիանոս Ե. վարդապետն Երանյանին՝ այցելութեան երթալով Հորնպի անգլիացի ծովագետին՝ որ «Մէլեքսանդրա» դրահաւորին մէջ կը գտնուի ի ծովածոցն վերոյիշեալ քաղաքին, բաղում սիրով և մեծարանօք ընդունուեր է ի նոյն ծովագետէն, որպէս և ի բարձա. գ. քսէն Լախիւսիլի, որ ի նոյն միջոցին յիշեալ դրահաւորին մէջ կը գտնուէր ։

Մ Ա Հ Ա Գ Ո Յ Ժ

Յաղգային վատտակաւոր երեւելաց քաղաքիս՝ մեծարդոյ Թոնիան ազգին Պաշտանեան, որ ի խորին ձերութեան հասեալ յամաց հետէ կը հանդստանայր ի տան իւրում, յանցելու շարքս թու ի Պուստովա գիւղն առ Աստուած՝ փոխեցաւ ի յաւիտեական հանգստութիւն ։

Հանգուցեալն՝ որ տեղւոյս ազգային գործոց մեծամեծ և օգտակար ծառայութիւններ մատուցած է յրնթացս բաղում ամաց, կը թողու ուսումնական արու զաւակ մի և բարեկիրթ դասերս ամուսնացեալս, որք անշուշտ անմահ պիտի պահեն զանուն Հօր իւրեանց ։

Վախճանելոյն յուղարկաւորութեան տխուր հանդէսն արժանաւայել փառաւորութեամբ կատարեցաւ, և մարմինն ի քաղաքս բերուելով թաղեցաւ ի գերեզմանատան սուրբ Թոնիանոս եկեղեցւոյն ։

Ահա սա է, ասաց նա, երբայեւցոց վարժատուն ։
Վայելուէ էր նորա չէնք, ամեն ինչ կարգին տեսայ ։
Կար բազմաթիւ երեխայք, որոնք էին Հրէայ ։
Կարդ ու կանոն և ուսումն տեսնուում էր նոր ոճով,
Կ'կարդային չորս լեզու՝ միատեսակ հագուստով ։
Մտածեցի եւ ինձէն թէ սոքա այսպիսի կրթութիւն
Ուսման ասպարէզին մէջ, տես, հայերն ինչ կը լինին ։
Ապա մի օր դնացի գտայ Հայոց վարժատուն ։
Ողորմելի մի տուն էր աշակերտներով լեցուն ։
Մի ծերուկ մարդ. դաս կ'տար, բաւականին ջանք կ'անէր ։
Երախտաւոր այս անձն Մանուէլ վարժապետն էր ։
Թէ և ընկած աշխուժէն նստած էր մի անկիւնում,
Փոքր երախայոց նոր այր ու բէն էր դաս ասում ։
Իմ վաղեմի ուսուցիչս տեսնելով, շատ ուրախացայ ։
Բայց նորա վատ վիճակին եւս ի սրտէ ցաւեցայ ։
Շատ խօսեցանք միասին տեղւոյն հայերի վերայ,
Եւ նոցա վարք թէ վիճակ հարցանելով իմացայ ։
Երեւումէ, ասացի, որ տեղիս Հայրքն խեղճ չեն,
Եւ իւրեանց գործերումն բաւականին յաջող են ։
Ամեն կարգի անձինք կան, վատտակ և գրամ ունին ։
Խեղցիք էլ պակաս չեն, ինչո՞ւ գարտիգ չ'օգնեն ։
Նոցա համարաւ ամեն տեղ ամենայն ոք լըսած է ։
Դպրոցիդ վիճակն անկարգ՝ նոցա անուան արժան չէ ։
Պէտք է որ ունենային մի բարեկարգ վարժարան,
Որ արդէն իսկ զարգացած՝ օտարաց լինէր խըթան ։
Իրաւ տեսմ՝ ամօթ է հրէայներին նայելով,
Ի նոցանց որքան յետ են այսպէս անփոյթ մնալով ։
Եւ դու, իմ պատուելի՛ հայր, յորդորէ որ ջանք անեն ։

Ազգային վարժարանն ամեն ուսմամբ զարգարեն ։
— Լաւ ես ասում, գոչեց նա, բայց մեր միտքը չ'գիտես ։
Մեր ազգայինք անփութ են, եռանդ չ'ունին կարծումես ։
Մինչև հիմա իմ յորդորք չ'իղեն նոցա լսելի ։
Քանզի ունին մի ձգտում որ չ'է իսկ անդունելի ։
Կ'արհամարհեն իմ խրատ, չ'են զիջանիլ իմ խօսքին ։
Պատճառ բերեն իրանց կիրք ու գարոյին չ'մերձին ։
Ի՞նչ է, ասեն, վարժարան ։ այդ կայ ամեն քաղաքում ։
Մենք նոր օրինակ մի բան կառուցանել եմք ուղում,
Որ դառնայ անհամելի և ամեն Հայ նախանձէ ։
Բնակչաց կամ օտարաց ուշ ու միտքն գրաւէ ։
Բարիկօնեան Աշտարակ կամին կանգնել ի նորոյ՝
Փոխելով իւր հին տեղէն քաղաքիս մէջ շինելոյ ։
Ընկերութիւն կազմած են գործըն կ'յառաջանայ ։
Այնպէս ամուր կ'իջեն որ յաւիտեան գիմանայ ։
Այս նոր գործոյ զբաղումն չ'ընդունաւ հանդիստ մօքքեր ։
Որ հաստատուին այս տեղում ազգասիրական գործեր ։
— Կ'զարմանամ, ասացի, ի վերայ ձեր խօսքերին ։
Այդ ձեր ասած մարդիկն սրճարանում թափառին ։
Ապա այդ ահաւոր չէնք երբ պէտք է գլուխ հանեն ։
— Պատասխանեց ծերուկն, նոքա իւրեանց գործ գիտեն ։
Այս ասածը գիշերն է, ցերեկն չ'են աշխատէ ։
Որ Տէր Աստուած տեսնելով չ'արկանայ խափանէ ։
Բայց մեր սրբազան Հայրք կ'յուսանք որ շուտով գայ ։
Խափանէ այդ Աշտարակն ու գարոյն հաստատէ նա ։
Երբ աւարտեց իւր խօսքն եւ մնացի զարմացած ։
Վերջին երկմիտ բառերէն չ'ախորժեց, Մ. ԲԺՇԿԵԱՆ ։
Ի Պաղտատ, 28 Դեկտեմբեր 1874 ։

«Մտախոս» օրագրոյն մէջ, ինչպէս նաեւ Պօլոյ
միւս լրագրաց ոմանց մէջ զհետեւեալ ծանու-
ցումն հրատարակեալ կըտեսնեմք :

ԺԱՌԱՆԴՈՒԹԻՒՆ

Գրիգոր Բօճա Ղազարիկ՝ վախճանեալ ի Հնդկաս-
տան յամի 3 հետեւ 1774 :

Վերոյիշեալ ժառանգութիւնը պահանջող
հանգուցեալ Յակոբ և Յովսէփ իսկէնաէր օղուի
նոյն ժառանգութեան վրայօք յուզած խնդիրը
Պօմպէյի բարձր տոտեանք գաւառատանական քըն-
նութեան ներքեւ առած ըլլալով, նոյն տոտեանք
մասնաւոր յանձնարարութիւն տուաւ Կ. Պօլոյ
Անգլիական ընդհանուր հիւպատոս և գաւառ-
աւոր միւսիւ Զօն Հէնրի Ֆօսէթին յանձնաժողով
(քովսիօն) մը սահմանելու, որպէսզի ի ներկա-
յութեան նոյն յանձնաժողովին վերոյիշեալ
հանգուցեալ իսկէնաէր օղու Յակոբին և Յով-
սէփին սերունդներուն փաստերն ու վկայու-
թիւններն լսելն և նշանակուին, ինչպէս ուրիշ
և և իցէ անձանց՝ որոնք վերոյիշեալ ժառան-
գութեան վրայ իրաւունք ունենալ կ'պահանջեն :

Ուստի իմաց կըտրուի որ վերոյիշեալ յանձ-
նաժողովը յառաջիկայ 1878 Ապրիլ մէկին (յստ
Էւրոպացոց) պիտի գումարուի յԱնգլիական
հիւպատոսարանն :

ՔԱՆԱՅԱՆ ԽԻՐԻՔ

Զմիռնիա, 18 Մարտ :

Թէ և ներկայ ամսոյ մէջ մեր կլիմային օդն
սովորաբար փոփոխական է, բայց այս տարի
արտաքին կարգի սաստիկ փոփոխութեան են-
թակայ եղած է և եղանակիս անյարմար օդոյ
բարեխառնութիւն մի կըտրէ : Հարաւային
բուռն հողմունք, փոթորիկք և անձրևք՝ փոք-
րիկ ընդհատութեամբ, անպակաս են գրեթէ
յուր շաբաթը հետէ : Հինգշաբթիէն միայն սկը-
սաւ գարնանային գեղեցիկ օդ ընել :

Եթէ հեռագրական վերջին լրոց հաւատ
ընծայեմք, Ռուսիոյ և Անգլիոյ մէջ եղեալ բա-
րեկամական յարաբերութիւնքն երթալով կը-
ցրտանան և սառելու վտանգի մէջ կըգտնուին :
Տէրութեանց ժողովին գումարումն թող տըր-
ուեցաւ, և Աւստրոհունգարիան զորակից
պիտի չլինի Անգլիոյ պահանջմանց :

Կըմանուցանեն ի Կ. Պօլոյ թէ փոխադարձ
սիրալիր այցելութիւնք եղեն ի մէջ օգոս. Սուլ-
թանին և բարձրա. Նիքոլաս Մեծ—Դ. քսին : Յետ
այնորիկ Նորին կայսերական Բարձրութիւնն գը-
նաց ի Բէրա ի գեսպանատունն Ռուսիոյ, ուր
ի ներկայութեան իւրում Ռուսական կայսերա-
կան զինանշանքն վերահաստատեցան ի ճակատն
յիշեալ գեսպանական պալատին :

Վեհափառ Սուլթանն չորեքշաբթի օրն մե-
ծաշուք հացիկերով մի տուաւ ի պատիւ Նիքո-
լաս Մեծ—Դ. քսին ի Նելլուր—Քէօջք անուանեալ
կայսերական պալատն, ուր Ն. Բարձրութիւնն և
Ն. Վեհափառութիւնն միասեղ ճաշելին բա-
րեկամական մտերիմ սիրով :

Օգոստոսիա Սուլթանն հաճեցաւ Օսմանիէ
կարգին առաջին աստիճանի շքանշանն մատու-
ցանել բարձրապատիւ Նիքոլաս Մեծ—Դ. քսին և
Կուրքօ ու Սըպէյէֆ զօրապետաց :

Ղազի Օսման վաշան՝ ընկերութեամբ պա-
տերազմի նախարար Բէուֆ վաշային ի Կ. Պօլոյ
վերադառնալով մեծ յարգանք և հայրենա-
սիրական ոգւով ընդունուեցաւ թէ ի կայսե-
րական պալատն և թէ ի Բարձրագոյն Դուռն :

Ըստ հեռագրական լրոց ինթիմէֆ զօրա-
պետն ամսոյ 14—26ին հասեր է ի Վիեննա :

Վէննայի Վլա Նուվէլ Բրէս լիպրօ օրագիրն
կըհաւատէ թէ Աւստրիական զօրքն ի մօտոյ
պիտի գրաւեն զՌուսիան :

Օգոստոսիա Սուլթանն հաճեցաւ Մէծի-
տիէ կարգին 4րդ աստիճանի շքանշանաւ պատ-
ուել զմեծարգոյ տեսար մօսիւ Էլի Կիֆրէ և մօ-
սիւ Պ. Տափան, որ քաղաքիս ծովափանց ընկե-
րութեան զլսաւոր գործակալքն են և բարե-
շուն ու զործունեայ աշխատութեամբ իւրեանց
մեծադէս նպատաւատոյց եղեն քաղաքիս
շինութեան յաջողութեան շինութիւն մեծա-

գործ՝ որոյ նմանն գրեթէ չէր տեսնուած յարդ-
թուրքիոյ մէջ, և որ պատիւ կընէ Տիւսօ Ֆրէր
գաղղիացի մեծահաւաք ընկերութեան :

Երեքշաբթի երկուշին երեք չարագործք ի
Չաքմաքըլ թաղն յարձակեցան Հայ երիտա-
սարդի մը վերայ, զոր վիրաւորեցին ձեռքէն .
այսու ամենայնիւ միայն անձրևու հովանոցն իւր
կըցան յախշտակել :

Միւսնոյն օրն կէսօր ժամանակ Մալմէդայ
թաղին անձուկ փողոցի մը մէջ դժբաղդ իէօ-
րիւք մի որ իւր քսակին մէջ 6—700 զուրուշ
ունէր, կողպտեցաւ յերկուց չարագործաց :

Կայսերական հրովարտակաւ, մեր գաւա-
ռին նախորդ կուսակալ վեհ. Սապրի վաշան՝
Դարապուլուի վիլայէթին ընդհանուր կառա-
վարիչ կարգեցաւ :

Դաղղիոյ նոր հիւպատոս մօսիւ Բէլիսիէ՝ տը
Ռէյմեն՝ յանցելով շաբաթու սկսաւ իւր պաշ-
տօնն ի գործ դնել, և այս առթիւ տեղական
իշխանութեան և քաղաքիս միւս հիւպատոսաց
հետ փոխադարձ այցելութիւններ տեղի ունե-
ցան ըստ սովորութեան :

Կըհաւատեն թէ եղիպտոսի անգլիացի և
գաղղիացի հիւպատոսք՝ միաբանութեամբ աշ-
խատեցան համողըւո զիւրաիֆն, որպէսզի հոգ
տանի ի գործ դնել զգանձային պարտաւորու-
թիւնս իւր՝ որոց յանձնառու եղած է :

Անցեալ շաբթու Աւստրիական Լոյտի «Բա-
լիփօ» շոգենաւով 1500 զալմականք եկան .
յորոց մեծագոյն մասը Չէրքէզէն : Ասոնց քով
բրիտանեայ պատանեակ մի գտնուեցաւ Աթա-
նաս անուն, զոր Չէրքէզք յափշտակած էին :
Բարեբաղդարար՝ քաղաքիս Յունաց Առաջնոր-
դարանի ջանքիւք յիշեալ պատանեակն աղա-
տեցաւ ի ձեռաց յափշտակաց իւրոց :

Իսկէնաէրուն գնացող Չէրքէզաց քով ևս
երկուստանամեայ Հոյ պատանեակ մի կայ ե-
ղեր, զոր նոյն գիւղաքաղաքին աղգասէր Հայ
մի գնաց առնելով յուղարկած է ի քաղաքն,
ուստի ի Կ. Պօլոյ ուղևորեցաւ :

Այս պատանեակն Ագրիանուօյուլեցի է . որոյ
պատմութեանն նայելով ի մերձեցաւ Ռուսաց
ի յիշեալ քաղաքն, խառնութիւն մի տեղի ու-
նեցեր է անդ, հետեւաբար աշակերտք Հայոց
գալաւտանն արձակուեց են, որպէսզի իւրաքան-
չիւրք պատասխարուի ի տան իւրում : Այս մի-
ջոցին Չէրքէզք յափշտակեր են գնա, որպէս և
զմի քանին ի գաղղիկերաց իւրոց :

Բաղաքիս «Նէա Սմիթին» յաւնարէն օրա-
գրոյն չորեքշաբթի առաւ թերթին մէջ զյե-
տագոյ ստղան ընթեռնուեց :

Ճանապարհորդ մի՝ որ յերէկն Եհաս աստ ի
Քասթորիայէ (Մակեդոնիա) կըգատմէ թէ նոյն
քաղաքն հասեալ են չորս պաշտօնակալք Անգ-
լիոյ կառավարութեան, որպէսզի քննեն զթիւ
ընակչաց Մակեդոնիոյ : Յիշեալ Անգլիացիքն
արձանագրելով զընակչիս Քասթորիայի մեկնե-
ցան ընկերութեամբ երկուց մահմետականաց և
երկու ալպանացի յուսաց, որպէսզի արձանա-
գրեն նաեւ զընակչիս շրջակայ գիւղօրէից :

Քաղաքիոյ պաշտօնական լրագիրն կըմա-
նուցանէ թէ հացին վերայ գրուած նոր տուրքն
սկսաւ առնուիլ յիշեալ գաւառին մէջ, այսինքն
մէկ օխտ հացէն 7 փարայ տուրք կ'առնուի :
Յայտնի է թէ այս արոց արդիւնքն սահմանեալ
է զգումաթ ուղիւ վերցնելու շրջաբերութենէ :

Նմանապէս Քասթորիայի պաշտօնական
լրագիրն կըսէ թէ նոյն քաղաքին մէջ մէկ օխտ
հացէն 10 փարա կ'առնուի հեռեւեալ կերպիւ,
այսինքն հացագործք կըվճարեն այս տուրքը ի
վերայ քանակութեան հացին որ կըչինեն : Իսկ
այն անձինքն որ իրենց տունը կըչինեն հացը,
կըվճարեն զյարաբերական տուրքն ի վերայ ա-
լիւրին : Այս նոր արոց գումարն՝ ըստ յիշեալ
լրագրոյն կըհասնի 1600էն 2000 զուրուշի օրն,
և պիտի գործածուի միմիայն գումարութեւի
ի շրջաբերութենէ վերցնելոյ համար :

Օսմանեան արժէթ ունեցողք, որք
բազմաթիւ են իտալիոյ մէջ, ի մօտ առաւր
մեծ ժողով մի ընելով ի Նաբլի, զհետեւեալ
որոշումն գրի առին և յուղարկեցին առ կա-
ռավարութիւնն իւրեանց :

Օսմանեան արժէթ ունեցողք ի ժողով
գումարութեւի Նաբլիի մէջ ի 6 Մարտի 1873,
առ ի հրաւիրել զիտալական կառավարութիւնն
որ հոգ տանի անջնաս պահել զօգուտս իւր-
եանց՝ ներկայ հաշտութեան առթիւ կնքելոյ ի
մէջ Ռուսիոյ և Թուրքիոյ, նկատելով թէ իրա-
ւանց ընդհանուր սկզբունք մի է՝ ընդունուած
յամենայն ազգաց, թէ տէրութեան մի եկա-
մուտը և նորա բոլոր երկիրն գրաւական դըր-
ուած կըհամարուի վասն ազգային ընդհանուր
պարտուց նոյն տէրութեան և թէ որ և է մասն
նոյն երկրին՝ ուրիշ տէրութեան մի չկրնար տըր-
ուիլ առանց այս գնող պետութեան ընդունե-
լոյ զհամեմատական մասն ազգային պարտուց :

«Ն» օրոշեն որ այս յիշատակագիրն յուղարկուի
իտալական կառավարութեան, և վստահ են
թէ նոյն իտալական կառավարութիւնն թէ ուղ-
ղակի և թէ միաբանելով Գաղղիոյ և Անգլիոյ
հետ, պիտի պահպանէ Դեսպանաժողովին մէջ
ինչպէս նաեւ գուրք, զօգուտս օսմանեան ար-
ժէթ ունեցող իտալացի հպատակաց :

Կըգրեն ի Կ. Պօլոյ թէ ըստ հրաւիրանաց
գեսպանատան միոյ՝ նոյն մայրաքաղաքին Յու-
նաց գրադիտական ժողովն (սիլլոզոս) վիճակա-
գրական աշխատասիրութիւն մի կըպատրաստէ
վասն ժողովրդոց թրակիոյ և Մակեթ միմիայն :
Կըսուի թէ միւսնոյն ինդիւրն յուղարկուեց է
Յունաց Պատրիարքարանին :

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

Բաւաղակին այսօրեայ արժէքն 335 զուրուշէ
առ կենդանարն՝ մեքենայով մաքրուածին հա-
մար իսկ Ատանայի տեսակն 320ի վաճառեցաւ :

Աֆիօնին հանգարտութիւնն կըշարունակէ .
այսու ամենայնիւ Գառահիսարի լաւ տեսակ ա-
ֆիօնի գիւրաւաճառ է 130 զուրուշի առ չէրին
և յայտ՝ շաբաթու գրեթէ 100 կողով Գառա-
հիսարի աֆիօն վաճառեցաւ յիշեալ գնով :

Փալամուտէն այս շաբաթու 4000 կենդանար
վաճառեցաւ 105 զուրուշի կենդանարն Անգլիոյ
տեսակը, 130ի նադիրէլ կոչուածը, և 162ի
մէցանա կոչուած տեսակը :

Տօրնէն, ճէհրէն, և ուրիշ բուրդէն որ և
է վաճառումն չեղև :

ԿԱՆԱԿԱՆՈՒՄ

ԹՈՐՈՍ ԼԵՈՒՆԻ

Յուրակալմ 355 երեսաց բաղկացեալ գեղեցիկ վի-
պասանքին մի է, բաղեայ ի պատմութեան Ռու-
բիճեան հարստութեան, որ կենդանի է և ճշգրիտ գու-
նով կըկարագրէ յայտարարի բարբառ. Կ. Պօլոյ,
գմեմութեան վերջի իշխանութեան Հալոյ ի Կիլիկիա,
գոր ի ձեռս բերին ի բուսակին 1145 :

Վաճառի ի Պօլոյ առամեցան գրավաճառս ի գին
2 Ֆրանքաց :

ԷՕՄԻՆ ՏՐ ՄԻՐՈՒՐ

Մարիօն տը Լօրմի խոստովանաքը, կամ
Պատմական տարվաքը :

Ի պարոն Գրիգոր Չիլինկիրեան գրագէտէն
թարգմանեալ այս բարոյական գեղեցիկ վիպա-
սանութեան վերջին հինգերորդ հատորն ևս որ
բաղկացեալ է յուրեմաւ 192 երեսաց, ի լոյս
ընծայեցաւ ի տպարանի Տէտէեան եղբարց :

Իւրաքանչիւր հատորին գինն 2 փրանք է, և
կըվաճառի ի քաղաքիս ի յիշեալ տպարանն :

ՍԻՐԱՒ ԵՒ ՍԱՄՈՒԷԼ

Բարի Հօր կըթական դասքն :

Գրեաց խրիմեան Ս. Հայրիկ Ե. ի լոյս ընծայեցին
եղբարք Յովհաննէս Ե. Մկրտիչ Լաւաճի ի նոյն
Հալոյ Հարց Ե. գարգացեալ որդոց : Վաճառի ամեն
նայ գրավաճառաց քով, Ե. որդեալ գինն Կ մի քան-
նոց բողբաղամ :

Խմբագիր—տէր Երազդոյ,
Գ. Լաւաճի. Պալատարէան :

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐՇԱՆՈՒՍՈՅ ԱՐԱՐԱՏԵՍԻՆ